



Հաճախորդի ապահովագրված մեքենան ենթարկվել է վթարի: Կատարվել է վարորդի սթափության վիճակի գննություն, ինչի համաձայն վարորդը համարվել է սթափ, իսկ գննության արդյունքները արձանագրության մեջ նշվել են %-ով: Հաճախորդի կողմից ներկայացվել է հատուցում ստանալու դիմում, որը մերժվել է ապահովագրական ընկերության կողմից այն հիմնավորմամբ, որ սթափության արձանագրության մեջ նշված և տոկոսով արտահայտված գննության արդյունքը հիմք է տալիս եզրակացնելու, որ վարորդը ոչ սթափ վիճակում է գտնվել: Վարորդը, սակայն, վերոնշյալ հետազոտության արդյունքների ճշգրտման նպատակով դիմել է համապատասխան բուժհաստատություն, որի արդյունքում իրեն տրամադրվել է սթափության վիճակի գննության ճշգրտված արձանագրություն, որով օրգանիզմի հետազոտության արդյունքը կրկին սահմանվել է սթափ: Սակայն սրանից հետո նունպես Ընկերության դիրքորոշումը չի փոխվել:

Ծանոթ լինելով Հաշտարարի գործունեությանը՝ Հաճախորդը դիմել է վերջինիս՝ խնդրելով վերականգնել իր խախտված իրավունքները:

Ընկերության կողմից Հաշտարարին ներկայացված բացատրություններից պարզ է դարձել, որ օրենսդրության, ինչպես նաև ներքին կանոնակարգերի համաձայն՝ Ապահովագրական ընկերության կողմից չի հատուցվում այն վնասը, որն առաջացել է ալկոհոլի կամ թմրանյութերի, ինչպես նաև տոքսիկ կամ սեդուկտիվ նյութերի ազդեցության տակ մեքենան վարելիս, ընդ որում՝ ալկոհոլի ազդեցության տակ ասելով հասկացվում է ալկոհոլի առկայությունն անձի օրգանիզմում սկսած 0.1%-ից: Հետազոտության համաձայն՝ վարորդի օրգանիզմում ալկոհոլի պարունակությունը կազմել է 0.23 մգ/լ, այսինքն, ըստ Ընկերության, դա ավելի է քան 0.1 մգ/լ, հետևաբար այս դեպքում վնասը ենթակա չէ հատուցման:

Հաշտարարը հարկ է համարել պարզել, թե արդյոք %-ը կարող է հանդիսանալ անձի օրգանիզմում ալկոհոլի ազդեցության չափման միավոր և եթե այո, ապա ալկոհոլի 0.1%-ի առկայությունն անձի օրգանիզմում նշանակում է արդյո՞ք, որ վարորդը եղել է ոչ սթափ վիճակում:

Հարցման արդյունքների համաձայն՝ վարորդի օրգանիզմում ալկոհոլի քանակը պետք է արտացոլվի ոչ թե տոկոսով, այլ պրոմիլետով, որն ալկոհոլի քանակը որոշելու ընդունված միավոր է: Կոնկրետ արձանագրությունում նշված 0.23մգ/լ հավասար է 0.46 պրոմիլետի, որն էլ իր հերթին հավասար է 0.0046 տոկոսի, որը փոքր է 0.1 տոկոսից, այսինքն՝ վարորդը չի գտնվել ալկոհոլի ազդեցության տակ և եղել է սթափ:

Հաշտարարը իր նկատառումները և վերոնշյալ հարցման արդյունքները ներկայացրել է Ընկերությանը, ինչից հետո վերջինս որոշել է հաշտության համաձայնագիր կնքել Հաճախորդի հետ:

Այսպիսով, Հաշտարարի միջնորդությամբ կողմերի միջև առաջացած խնդիրը գտավ իր լուծումը: